



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

Արովյանի սիրելի՛ քաղաքացիներ, ՏԻՄ գործող և նախկին ներկայացուցիչներ, քաղաքի հյուրեր ու բարեկամներ,

Սրտանց շնորհավորում եմ մեզ բոլորիս այս գեղեցիկ տոնի՝ Արովյանի 55-ամյակի առիթով և առանձնահատուկ ուզում եմ շնորհակալություն հայտնել հինգուկես տասնամյակ քաղաքին իրենց ծառայությունը մատուցած բոլոր շինարարներին, մանկավարժներին, բժիշկներին, ոստիկաններին, պետական ու համայնքային ծառայողներին, քանի որ այսօր իրենց աշխատանքի արդյունքում ունենք այսպիսի Արովյան: Այն այլևս քաղաքային մշակույթ, ուրույն դիմագիծ ունեցող համայնք է, որն իր տարբերվող տեղն ունի մյուս քաղաքների շարքում և ամենակարևորը՝ հայտ է ներկայացնում լինելու սմարթ քաղաք, էկո քաղաք, կանաչ քաղաք: Այս բոլորը հնարավոր է դարձել մեր բոլորի համատեղ աշխատանքի արդյունքում:

Ուզում եմ առանձնահատուկ կարևորել մեկ շատ կարևոր հանգամանք. կենտրոնական իշխանությունների, մարզային իշխանությունների, ՏԻՄ-երի, գործարարների, քաղաքի նվիրյալների ջանքերով մենք այստեղ պետք է ունենանք այնպիսի հասարակություն, որտեղ գլխավոր սուբյեկտը քաղաքացին է. մենք պիտի ունենանք քաղաքացիական հասարակություն: Հաջորդ հորելյաններին այն այս գեղեցիկ միջավայրում պետք է արդեն կայացած լինի: Իրավատեր քաղաքացու համար ոչ մի որոշում չի կարող ընդունելի լինել, եթե այդ որոշումը չի սպասարկում բացառապես հանրային շահն ու չի առաջնորդվում դրա գերակայությամբ:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ հիանալի տոնի կապակցությամբ: Սիրում եմ բոլորիդ:

Հարգանքով

Ռ. Պետրոսյան